# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 451-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2018 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 451-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1394-Ն և 2015 թվականի փետրվարի 5-ի N 117-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունվարի 13-ի N 15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 451-Ն որոշման հավելվածում՝

- 3-րդ և 5-րդ կետերում «մայիսի 15-ը» բառերը փոխարինել «հունիսի 8-ը» բառերով.
- 4-րդ կետում «հունիսի 1-ը» բառերը փոխարինել «հունիսի 25-ը» բառերով.
- 5-րդ կետում «հունիսի 1-ը» բառերը փոխարինել «հուլիսի 1-ը» բառերով.
- 8-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «գիտական հրապարակումների, ինչպես նաև հայոց լեզվից կամ հայ գրականությունից կամ հայ ժողովրդի պատմությունից մենագրությունների կամ ստացած արտոնագրերի կամ գրանցված հեղինակային իրավունքների» բառերը փոխարինել «ինչպես նաև բարձրագույն որակավորման կոմիտեի ցանկում ընդգրկված ամսագրերում հրապարակված գիտական հոդվածների» բառերով.

բ. 4-րդ ենթակետում «գնահատականի» բառից հետո լրացնել «(ՄՈԳ)» բառը, իսկ «շրջանակներում)» բառից հետո՝ «որը պետք է կազմի ՄՈԳ-ի առավելագույն արժեքի առնվազն 90 %-ը» բառերը:

2) 9-րդ կետում «70» և «80» թվերը համապատասխանաբար փոխարինել «60» և «65» թվերով.

3) լրացնել նոր 9.1 կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«9.1 Գերակայություն ճանաչված յուրաքանչյուր ոլորտի մասնագիտություններով նշանակալի նվաճումներ են համարվում քաղաքացու՝ աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման http://www.shanghairanking.com/# կայքի տվյալ տարվա ցանկերի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններ բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված), մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով սովորելու կամ դիմորդ հանդիսանալու հանգամանքը՝ ուսման և կացության համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրների (scholarship) վերաբերյալ փաստաթղթերի առկայությամբ:»:

4) «Նշանակալի նվաճումների ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանություն» վերտառությամբ Ձևի՝

ա.1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Գիտական հրապարակումներ (հոդվածներ): Գիտական հոդված՝ «Web of Knowledge» և «Scopus» միջազգային գիտատեղեկատվական շտեմարանների, ինչպես նաև Բարձրագույն որակավորման կոմիտեի ցանկի հրապարակումներում ընդգրկված հղման ենթակա հոդված:

յուրաքանչյուր հրապարակման (հոդվածի) համար՝

A-ն գիտատեղեկատվական շտեմարաններում ամսագրի ընդգրկվածությամբ որոշվող գործակիցն է՝

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| IF* | որոշված չէ | <0.2 | 0.2-0.5 | 0.5-1.0 | 1.0-2.0 | 2 |
| A** | 3 | 5 | 10 | 13 | 15 | 1 |

*) IF` ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցն ըստ «Institute for Scientific Inf
տվյալների:
**) Սահմանային արժեքի դեպքում վերցվում է առավելագույնը:

C-ն հղումների քանակն է` առանց ինքնահղումների.

N-ը համահեղինակների կամ համամրցանակակիրների ընդհանուր թվաքանակն է:»:

բ. 5-րդ կետում «երաշխավորագիրը» բառից հետո լրացնել «և դիմորդի հետ հարցազրույցը» բառերը.

գ. 7-րդ կետում աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ`

«

| Կրթական ծրագիրը | Համամասնության գործակցի արժեքը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | $k_1$ | $k_2$ | $k_3$ | $k_4$ | $k_5$ |
| Մագիստրատուրա | 0.75 | 0.5 | 0.5 | 2.0 | 1.25 |
| Ասպիրանտուրա | 1.0 | 0.5 | 0.5 | 2.0 | 1.0 |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: